

Այդ երանելի մարդիկ՝ թուր՝ կանոնաւոր վաճառա-
տետր անգամ չէին գործածեր, որպէս զի գէթ տեղ մը
պատահէինք իրենց վրայ ձեռագիր յիշատակարաններու
մը: Կ. Պոլիսի և Թուրքիայի գլխաւոր քաղաքաց յա-
ճախաւոր հրդեհներն ու վատնող հրդեհող հովարսայու-
թիւններն և անուսումնասիրութիւններն ալ՝ ոչնչացու-
ցած ըլլալու են շատ բան այդ հինաւուրց յիշատակա-
րաններէն: Սա միայն կրնանք հաւատեալ արձանագրել՝
որ Թուրքացոց մեծ վաճառականութիւնը, գէթ մինչև
19րդ դար, ցամաքային էր ու շատ ալ շահաբեր⁽¹⁾.
Եւ 1830էն ասդին սկսաւ վերածուիլ ծովային՝ մանաւանդ
Անգղիայի հետ՝ հարկաւորաբար, ինչպէս որ «Ժողովուրդ-
ներու վերջին ապաւէնն եղած է ծովային վաճառակա-
նութիւնն ըստ Վոլդէրի: Le commerce maritime a toujours
été la dernière ressource des peuples. (Voltaire. Essai sur
les mœurs des nations. Introduction). հին մատենագիրք
ցամաքային վաճառականութիւնն ոսկի դարուն և ծովա-
յինն երկաթի դարուն կընծայեն: Եւ այս պարագայ,
ինչպէս հին ու նոր հայերուն վրայ, նոյնպէս ճշմարտուած
է գլխաւորապէս հին Փիւնիկեցւոց⁽²⁾, Կարքեղանացւոց,
Յունաց և 12րդ դարէն մինչև 18րդ դար՝ նաւագնաց
ձենովացի, Վենետիկցի, Բորդուկէզ և Հոլանտացի վա-
ճառականներու վրայ, որ առհասարակ ցամաքի կողմէն
անձկացած ու անըստացուած էին:

(1) 19րդ դարուն սկիզբն՝ երկու վաճառական հայեր Պարսից աշ-
խարհին ցամաքէն անցան Պոլսարա և անկէ Կ. Պոլիս. Հնախօսութիւն
Ինճիճեանի հատ. Ա. էջ 241.

(2) Փիւնիկեցիք՝ առաջ կը բնակէին, ըստ Պարսիկ գիտնոց, Կար-
միր ծովի եզերքը. ապա անցան Միջերկրականի արեւելեան եզերքը,
ուրկէ մեծ և յանդուզն նաւազնացութեանց ձեռնարկեցին՝ վաճառակա-
նութեան և աշխարհագրատեան համար: Տե՛ս Երոզրոտ: (Դիրք Ա.
Կղիով, հատուած Ա.):